

ՏԻՐԱՄՈՐ ԱՆՈՒՆԸ

Քաղցր զօղանջն այն երկնային,
Քաղցր նըւագն այն երկնային,
Զոր սիրոյ լարն անմահներուն
Արեւուն հետ, արեւուն լոյս
Միշտ կը հնչէր սիրազեղուն,
Այդ քու անունդ էր քաղցր կոյս:

Զայն կը ձայնէր ամպն ամպերուն,
Զայն կը կրկնէր երկինքն անհուն,
Հովն հովին հետ թեթեւ թեւով
Մարիամ անունըդ կը կանչէր,
Ու ծիծեռնակն իր թըռիչքով
Մարիամ, Մարիամ կը գեղգեղէր:

Շաղ շաղ աստղերն ալ պայլըլուն
Կ'երգէին միշտ այդ սուրբ անունն,
Երբ ամպերէն ցօղ կը տեղար,
Հովտէ հովիտ ու լեռնէ լեռ,
Ամէն ծաղիկ եւ ամէն ծառ
Այդ սուրբ անունը կը կըրէր:

Երբ լուեցաւ երկնէ Մարիամ,
Երկիրս տըւաւ ըզբեղ Մարիամ,
Ես լըսեցի ձայն մը միայն,
Ամէն հրեշտակ եւ արարած
Սըրինգներու պէս հովուական
Քեզ կ'երգէին սիրով արրած:

Ոչ մէկ անուն կայ գեղեցիկ,
Ոչ մէկ բարբառ այնքան քաղցրիկ,
Քան թէ անունդ, հեղիկ քնքուշ,
Գողարիկ, փափիկիկ, լոյսէն մաքուր,
Զոր ինքն Աստուած այսքան անոյշ
Բառ չըհիւսեց եղեմարոյր:

Ո՛հ, ինչ սուրբ է, ինչ օրհնութիւն,
Զինչ աստղերով հիւսուած անուն,
Իր մէջն ունի խորհուրդ անհաս
Լոկ Աստուծոյ իմանալի,
Որ կը գըրկէ ամբողջ աշխարհս
Միշտ խնկելի, միշտ պաշտելի:

Իր մօրն անուան հետը փափուկ,
Զայն կը կրկնէ ամէն մանուկ,
Ու հայր եւ մայր, օրդեակ քաղցրիկ
Գերի, ազատ, հարուստ անկար
Պատերազմին մէջը մարտիկ
Զայն կը կանչեն պաշտպան եւ Մայր:

Իր անունով նաւաստիներ
Կը պատանեն ծովն եւ անդունդներ,
Երբ կը խուժէ ըմբոստ կոհակ
Աւազին գէմ ու նաւերուն
Լոկ այդ անունն ինչպէս կայծակ,
Սանձ կը դընէ փրփուրներուն:

Կը ծաղի միշտ ինչպէս արփին
Օրհնելու դաշան հեղ աղբաստին,
Ու կը խառնէ այրիներու
Արցունքներուն բուրումն հեշտին,
Որբին կու տայ յոյս ապրելու
Մահամերձն ալ կ'ազդէ երկին:

Մեղր իմ բերնիս մէջ կը հօսի,
Շրթներս կու տան քուրում վարդի,
Լեզուս կ'ըլլայ երկնի կիթառ,
Երբ կը հընչէ Մարիամ անուն
Ես կը փոխուիմ սիրոյ բարբառ
Շունչս ալ նըւագ եւ օրհնութիւն:

Արդ ես տըկար եւ արամազին,
Ինչպէս մանուկ մը լալագին,
Քեզ կը կանչեմ Մարիամ Մարիամ...
Դուն ամէն օր ամէն վայրկեան
Ինձ յոյս եղիր, մայր, ամէն ժամ
Աստուածածին Մարիամ, Մարիամ...:

Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Թրգմ. վերածեց Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ



ՆՈՅՆՈՒԹԻՒՆ ՏԵՆՁԵՐՈՒ

Դուն մի ըլլար ինձ արամօրէն մեղադիր
Թէ չերգեցի երբեք տենչերդ ու սէրերդ.
Կը համբուրուի ամէն ծաղիկ լոյսին հետ,
Եւ սիրտ սրտի միշտ կը կապէ մեր երկիր:

Քեզ կը խորհիմ առանց անունդ գիտնալու.
Եւ կը տեսնեմ մէջըդ ամբողջ մարդկութիւնն.
Քերթողի սիրտն է հիւրանոց ամէնուն,
Եւ միշտ գարնան ծաղիկ մ'ունի ձօնելու:

Ես չեմ ցաւիր թէ չըկարգաւ քերթուածներ,
Որոնք անունս ինչպէս ըստուեր մը կըրեն.
Հաւատա ինձ, չենք բաժնըւիր աշխարհէն

Առանց երբեք կոխելու նոյն համբաներ.
Նոյն է տենչանքն և նոյն է սիրտն ամէնուն,
Որ կը ծաղկէն ներքեւը նոյն արեւուն:

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՆ

Ծաղիկներն ալ ունին հոգի մը զգայուն
Որ դոյն կու տայ, գեղեցկութիւն թափանցիկ.
Թարմ այտերուն պէս աղջնակի մը փոքրիկ,
Որ կը փթթի նայելով միշտ արեւուն:

Կը բուրեն միշտ և կը մընան անըսպառ,
Լոյսի նըման խառնըւելով կապոյտին.
Կը սընանին միայն ցօղովն երկինքին
Աւելի սուրբ նըւիրութեւ մեզ համար:

Աստուած անոնց խընամքն ունի առանձին,
Իբրեւ մանուկ եւ միշտ տըկար արարած.
Զուր կը հանէ կըրանիդներ ջախջախած,
Եւ խանձարուր կը պատրաստէ դալարին,

Որ միշտ ժըպտին և լոյս փընտուեն անդադար,
Իրենց հոգին սփռելով բոյր մեզ համար: